

ՄԻԱԿԱԶՄ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԱՆԻՐԱՆԿ ԿԱՐԱԳԵՏՅԱՆ

Միակազմ նախադասությունը մեզանում քննության առարկա է դարձել վերջին երկու տասնամյակի ընթացքում: Սովետահայ լեզվաբանները հիմնականում քննել են միակազմ պարզ նախադասությունները, իսկ այդ կառույցի բարդ նախադասությունների մասին արել են առանձին դիտողություններ:

Լեզվական ոչ սակավ փաստերը հաստատում են նաև միակազմ բարդ համադասական, այդ թվում միավորյալ նախադասության գոյությունը ժամանակակից հայերենում: Միակազմ միավորյալ նախադասությունը հակադրվում է մի կողմից՝ երկկազմ միավորյալ նախադասությանը, մյուս կողմից՝ միակազմ այլ (պարզ, բարդ ստորադասական, բարդ համադասական, բայց ոչ միավորյալ) նախադասություններին և ունի կառուցվածքային ու իմաստային իր ուրույն առանձնահատկությունները: Երկկազմ միավորյալ նախադասությունից այն տարբերվում է իր միարևեդ կառուցվածքով: Նրանում բացակայում է ենթակայի եզրը: Հետևաբար միակազմ միավորյալ նախադասության մեջ առարկան (առարկաները) և նրան (նրանց) վերադրվող հատկանիշները չունեն իրենց բառաքերականական տարբերակված արտահայտությունը: Ինչպես՝ «հենդէի լեզուն կտրում են և աչքը հանում» (ՍԱՀՀ, 54): «Զուռել, միայն մեղմացնել կրակը» (ՀՔՄՏՀ, 1, 148): Այս նախադասություններից յուրաքանչյուրում նշվում է մտային սերտ կապի մեջ գտնվող երկու գործողություն, որոնք արտահայտող դիմավոր և անդամ գերադաս անդամները համարմբ են, երկկազմ բարդ նախադասության ստորոգյալներին և (առանձին կամ իրենց լրացումներով) բաղադրիչ նախադասությունների դեր են կատարում: Այնուհետև դրանք, որպես համադասական հարաբերությամբ կապված մեկից ավելի ստորոգյումներ ունեցող կառույցներ, բարդ համադասական, իսկ ավելի կոնկրետ՝ միավորյալ նախադասություններ են, քանի որ դրանցում գործողությունների կատարումը սպասվում է միևնույն անձի կամ անձանց, այն է՝ ընդհանուր տրամաբանական ենթակայի կամ ենթակաների կողմից: Բերված օրինակներում ենթական թեև չի վերադանդնվում, բայց և այնպես պատկերացվում է, մտովի ըմբռնվում: Այդ ենթադրյալ ենթական ընդհանուր է բոլոր բաղադրիչների համար, ինչպես երկկազմ միավորյալ նախադասության մեջ քերականական ենթական է լինում: Որքանով բաղադրիչ նախադասությունների ստորոգյալին հատկանիշները վերաբերում են միևնույն առարկային կամ առարկաներին, այնքանով էլ այդ նախադասություններն ունեն տրամաբանորեն ըմբռնվող ընդհանուր ենթակա: Հետևաբար, եթե երկկազմ միավորյալ նախադասության մեջ բաղադրիչների միավորման հիմքը ստորոգյալին հատկանիշների վերադրումն է ընդհանուր քերականական ենթակային, ապա միակազմ միավորյալ նախադասության բաղադրիչների միավորման հիմքը այդ հատկանիշների մտովի վերադրումն է տրամաբանորեն ըմբռնելի ընդհանուր ենթակային: Բացի դրանից, այս դեպքում բաղադրիչների միավորմանը նպաստում են նաև դրանց միջև գործավող շարահյուսական հարաբերությունները, մյուս ընդհանուր անդամները, կապակցման բառական միջոցները և այլն:

Այսպիսով, քաղմակի դերադաս անդամներով միավորված այն համադասական եռադասությունը, որի մեջ տարբեր հատկանիշներ տարադրվում են քերականորեն չարտահայտված, բայց տրամաբանորեն ըմբռնվող միևնույն առարկային կամ առարկաներին, կազմում է միակազմ միավորյալ նախադասություն:

Միակազմ միավորյալ նախադասությունները լինում են երկու տեսակ՝ դիմավոր ու անդամ: Դիմավոր միակազմ միավորյալ նախադասությունն ունի քերականական դեմք, թեև այն չի մասնավորվում որևէ կոնկրետ առարկայի վրա: Ինչպես՝ «Վեր ես կենում ինքնազուրկ գլուխդ առնում, Թողնում գնում» (ՀՄՔ, 88): Իսկ անդամ է կոչվում այն միակազմ միավորյալ նախադասությունը, որ չունի քերականական դեմք: Ինչպես՝ «եստել այստեղ, անվերջ նըստել ու նայել Աշնանամուտին և քրքրել հին հուշեր» (ՎՏԵ, 2, 106): Դիմավոր ու անդամ միակազմ միավորյալ նախադասությունների ստորոգյումների և հնչերանգի արտահայտությունը

տարրեր է: Դիմավոր կառուցումը ստորոգումները նշույթավորվում են՝ հանձին դիմավոր բայերով գրեցողված գերադաս՝ անգամների քերականական արտահայտության: Բայց մյուս կողմից՝ քանի որ դեմքը տվյալ դեպքում ունի ձևական նշանակություն և շատ հաճախ էլ մնում է անորոշ, ուստի ստորոգումներն էլ ձևական են. ինչպես՝ «Առաջ կեր, հետո գոհացիր» (ԱՂՀԱ, 160):

Անդեմ միակազմ միավորյալ նախադասության մեջ ստորոգումները շունեն քերականական արտահայտություն և գրեցողվում են հնչյունաբանական շարահյուսագիտության մեջ հնչյունաբանական ստորոգումը գիտվում է որպես անդեմ միակազմ նախադասության բնորոշ առանձնահատկություններից մեկը: Անդեմ միավորյալ նախադասության մեջ ես հնչյունաբանական դերը երկակի է. այն և՛ ձևավորում է մտքի ավարտվածությունը, և՛ իրականացնում է ստորոգումները: Ուստի այս դեպքում էլ բառական-քերականական միջոցները և հնչյունաբանական գտնվում են հակադարձ համեմատության մեջ: Այսպես՝ «Հեռակա Դեմքապանի արտահայտություն և խոսքերն են» (ԴԴԿ, 260): «—Անիծյալ Արշակունի... այլասերեց ժողովրդյան և դարձրեց տիրանեղ ու տիրասպան: Մոլի խոռոնակիչ, մութառաքյալ և ո՛չ բազմաբն...» (ՍՋՀ, 68): Ընդգծված նախադասությունները, մասնավորապես երկրորդը, հնչյունաբանական ստորոգումից բացի ունեն նաև, այսպես կոչված, մեծային կամ արտահայտված ստորոգում: Տվյալ դեպքում մտային ստորոգում ենք դիտում խոսքաշղթայում հատկանիշների մտովի կապվելը միևնույն առարկային կամ առարկաներին: Ընդգծված նախադասությունները միավորյալ են, քանի որ բազմակի հատկանիշները տրամաբանական ստորոգմամբ վերագրվում են միևնույն սուբյեկտին: Այսպես, օրինակ, երկրորդ նախադասության մեջ Արշակունին է խոսնակիչը, մարդասպանը և ոչ թագավորը (Իհարկե, տվյալ գրական հերոսի՝ Կամսարականի բնութագրմամբ): Այդ նախադասությունը համառոտ է (Արշակունին) մոլի խոսնակիչ է, մարդասպան է և ոչ թագավոր: Երկակազմ կառուցված:

Միայնակ, առավել ես անդեմ, միավորյալ նախադասության, որպես շարահյուսական կառուցի, ըմբռնման հարցում էական նշանակություն ունի խոսքը, համատեքստը: Այսպես՝ «Առավոտը վաղ ամբողջ Բաղդադը թնգում է մունեթիկների ձենից, թե Հարուն Ալ Ռաշիդ թագավորն էսպես է հրամայում. շուրը Աստղծուն է, և էսօրվանից ոչ ոք իրավունք չունի փողով ծախելու: Պատանի բալա շրիհրենի տիկնոջ ու ջարդիլ նրանց կծեր: Աղբառ Հառախի կռվում էլ ջարդում են շրի համբիբն ու դառալի ետ դրկում» (ՀԹԸ, 373): Ընդգծված նախադասությունների բովանդակությունները (ներառյալ ստորոգվող հատկանիշների վերաբերությունը) հասկացվում են միայն համատեքստից:

Դիմավոր միակազմ միավորյալ նախադասության ստորոգային հատկանիշների վերաբերության՝ լեզվամիջավայրով պայմանավորված լինելն է պատճառը, որ միևնույն նախադասությունը երբեմն մի համատեքստում ըմբռնվում է որպես միակազմ, իսկ մեկ ուրիշում՝ երկակազմ: Այսպես՝ «Ջորեղ զգացմունքներից ալեկոծվող սիրտն էլ ունի իր կապրիզները, ինչպես օվկիանոսն ահեղ փոթորիկի ժամանակ... Ուզում ես աղոթել և անհիշել, ուզում ես աղոթել և մեռնել: Երանի, բայց վալ նրան, ում սրտին հատուկ են այդպիսի ալեկոծությունները» (ՆԴԵ, 237): Ընդգծված նախադասությունը դիմավոր միակազմ է, որովհետև ունի ընդհանրական նշանակություն, մինչդեռ խոսքից դուրս կարող է ըմբռնվել նաև որպես զեղչված ենթակառուցված երկակազմ միավորյալ նախադասություն (համառ. «Դու» ուզում ես աղոթել և անհիշել, ուզում ես աղոթել և մեռնել): Ավելացնենք, որ շունեն դեպքերում յուրաքանչյուր նախադասություն պետք է դիտել որպես տարրեր նախադասություն և ոչ թե միևնույն նախադասության տարրեր կիրառություն: Այլ կերպ՝ այդպիսի կապակցությունները հանդես են գալիս որպես շարահյուսական համաձայնություններ²:

Պատահում է նաև հակառակը. միևնույն միավորյալ նախադասությունը տվյալ համատեքստում երկակազմ է, իսկ խոսքից դուրս ըմբռնվում է որպես միակազմ: Դա լինում է մաս-

¹ Տե՛ս, «Грамматика русского языка», т. 2, ч. I, М., 1854, с. 184; В. В. Виноградов, Основные вопросы синтаксиса предложения («Вопросы грамматического строя», М., 1955, с. 405); Ս. Գ. Արրահայան, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1962, էջ 26—27, 2. Հարությունյան, Անդեմ նախադասությունների ժամանակակից հայերենում, Երևան, 1970, էջ 7:

² Ս. Գ. Արրահայան, Ն. Ա. Պատնասյան, 2. Ա. Օհանյան, Խ. Գ. Բադեկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 472:

նավորապես այն ժամանակ, երբ նախադասությունն ունենում է ընդհանրական նշանակություն, երբ նրա բովանդակությունը կարող է ընդհանրացվել: Այսպես՝ «Սիրում եմ այդ տեսակ մարդկանց... դիդում են, դիդում, էլի քաղցած են... Միայն ծուլները կարող են նրանց ազա համարել... Ունենա, աշխատիր կրկնապատկել, եռապատկել: Քոնը քիչ է, խլիր հարեանիցդ ընկերոջիցդ, հղբորիցդ, ձանկերդ օրի ու ընկիր աշխատե՛ք հոգին նախ, մի՛ նայիր ու լսողով կու՛ր պես սրան ու նրան նախանձիր: Ո՞ր վաճառականը կարող է մի տերություն հավասարվել» (ԱՇԲ, 131): Ընդգծված նախադասությունը տվյալ դեպքում երկկազմ է, քանի որ խիստ որոշակի են և՛ խոսողը (Մարութիանյան) և՛ խոսակիցը (Միքայել), բայց խոսքից դուրս կարող է գիտվել նաև որպես միակազմ, երբ հաշվի ենք առնում ղրանով խոշոր բուրժուազիայի ընդհանուր հոգեբանության դրսևորումը: Այսպիսով՝ միակազմ միավորյալ նախադասության զնահատման հարցում շատ կարևոր է համատեքստի հաշվառումը:

Միակազմ միավորյալ նախադասության բաղադրիչները կապվում են շարահյուսական տարրեր հարաբերություններով՝ միավորական, ներհակական ու տրոհական, որոնք պայմանավորում են նախադասության կառուցվածքային ու իմաստային մի շարք առանձնահատկություններն ու տվյալ դեպքում շունեն գործառական միևնույն հաճախականությունը. ավելի հաճախադեպ են՝ միավորական ու ներհակական հարաբերությունները, իսկ տրոհական հարաբերությունը սակավ է հանդիպում:

Միակազմ միավորյալ նախադասության կառուցվածքային յուրահատկություններից մեկն էլ գերադաս անդամի զեղչումն է, որը կատարվում է երկկազմ միավորյալ նախադասության ստորոգյալի զեղչման համաբանությամբ՝ ինչպես՝ «Տղին զույգ ձեռով են պահել, աղկան՝ մեկ» (ԱՂՂԱ, 329), «Հասկացողին՝ մին, չհասկացողին՝ հազար ու մին» (առած):

Միակազմ միավորյալ նախադասությունը ոչ միշտ է հանդես գալիս ինքնուրույն: Այն երբեմն դառնում է շարահյուսական այլ կառույցների (տարրեր ենթականերով բաղդ համադասական ու բաղդ ստորադասական նախադասություններ, մեղբերվող նախադասությամբ կապակցություն) բաղադրյալ կազմությամբ բաղադրիչ, Օրինակ՝ «Նա (երկիրն) է որոշում նրանց ճակատագիրը. առանց նրա բնավորությունը ճանկանալու ո՛չ կարող ես անցյալը բերանել, ո՛չ ներկադ ճանկանալ, ո՛չ ապագադ տեսիլներն» (ՀԹԸԾ, 403): «Զմոռանամ, որ Սաճակ վաճառպետին օրում էին մեծ գյուղում և մինչև օրս էլ նիշում են» (ն. տ., 398):

Այժմ անցնենք միակազմ միավորյալ նախադասության երկու տարատեսակների կառուցվածքային ու իմաստային յուրահատկությունների քննությանը: Դիմավոր միակազմ միավորյալ նախադասությունը բաղադրվում է դիմավոր բայերով արտահայտված մեկից ավելի գերադաս անդամներից: Այս դեպքում դիմքը առկա է սոսկ ձևական-քերականական առումով: Նման միավորյալ նախադասության դիմային իմաստը նույնպես վերաբերության տեսակետից միատարր չէ: Այսպես՝ «Էն մենավոր ծառի տակ Փոս փորեցին մի խորին, Առանց ժամ ու պատարագ Մեջը դրին Մարտին, էն սև քարըն էլ տալեցին, Բերին վրեն քաշեցին» (ՀԹԸԾ, 148): «Բարեկամի հետ կերովում արա, առևտուր մի անի» (առած): Առաջին նախադասության գերադաս անդամների դիմային իմաստը վերաբերության տեսակետից անորոշ է, քանի որ տվյալ դեպքում գրողը (խոսողը) կարևորությունը տալիս է բուն գործողություններին, այլ ոչ թե դրանք կատարողներին: Իհարկե, գործողությունների կատարումը տրամաբանորեն կապվում է կոնկրետ սուբյեկտի՝ Մարտի մերձավորների հետ: Բայց քանի որ գործողությունների կատարումը չի մասնավորվում կոնկրետ առարկայի (առարկաների) վրա, ուստի այդ նախադասությունը անորոշ դիմավոր միակազմ միավորյալ է: Երկրորդ նախադասությունը դիմային վերաբերության տեսակետից ունի ընդհանրական նշանակություն. նրա բայական գերադաս անդամների գործողությունները վերաբերում են ընդհանուրին, մարդուն առհասարակ: Դա յարգելիս փոխհարաբերությունների փորձից արված ընդհանրացում է և ընդհանրական դիմավոր միակազմ միավորյալ նախադասություն է:

Այսպիսով, դիմավոր միակազմ միավորյալ նախադասությունները դիմային վերաբերության տեսակետից բաժանվում են երկու խմբի՝ ա) ընդհանրական դիմավոր միակազմ միավորյալ նախադասություններ և բ) անորոշ դիմավոր միակազմ միավորյալ նախադասություններ:

1. Ընդհանրական դիմավոր միակազմ միավորյալ (կրճատ՝ ԸԴՄՄ) նախադասությունն ունի ընդհանրական նշանակություն. նրանում հատկանիշները ստորոգծվում են բերականական երեք դեմքերից յուրաքանչյուրին: Այս դեպքում դեմքը ձևական նշանակություն ունի, սոսկ արտահայտության միջոց է, և «հաղորդումը վերագրվում է մարդկանց ընդհանրապես, ընդհանրացվում է իրականության որևէ կողմը՝ որպես խրատ, արգելք և այլն»⁴: Հետևաբար ԸԴՄՄ նախադասությունների սուբյեկտը մարդն է ընդհանրապես, քանի որ դրանք մարդկության դավոր կենսափորձից արված եզրակացություններ են: Նման նախադասությունները հիմնականում ժողովրդական առածներ են ու ասացվածքներ, ինչպես՝ «Հարսնետունը լգիտե, չերեփն առած կվազե» (ԱՂՀԱ, 101), «Առաջ ասեղը քեզ խրե, հետո մախաթը՝ ընկերիդ» (ն. տ., 159), «Երեխային բանի դիր, հետը գնա» (ն. տ., 68): Չնայած այս նախադասությունների բայական գերադաս անդամներն արտահայտված են եզակի երրորդ ու երկրորդ դեմքերով, բայց և այնպես դրանց բովանդակությունները վերաբերում են մարդուն ընդհանրապես, որը բաղադրիչ նախադասությունների միավորման հիմքն է: Այդ բաղադրիչների միավորման մյուս հիմունքը համապատասխան գործողությունների սերտ կապն է և միևնույն իրադրության մեջ դրանց երևան դալը: Այսպես՝ հարսնետունը չիմացողը և չերեփն առած վազողը նույն անձն է և այլն:

ԸԴՄՄ նախադասությունները հիմնականում բայական են և ըստ գերադաս անդամների արտահայտության բաժանվում երկու խմբի՝ ա) բայական միևնույն եղանակաժամանակային ձևով արտահայտված գերադաս անդամներով միավորյալ նախադասություններ և բ) տարբեր եղանակաձևերով արտահայտված գերադաս անդամներով միավորյալ նախադասություններ: Ընդամենը, գերադաս անդամների արտահայտությունը պայմանավորում է բաղադրիչ նախադասությունների միջև գործառնող շարահյուսական հարաբերությունը:

Ավելի հաճախ ԸԴՄՄ նախադասության բայական գերադաս անդամները դրսևորվում են միևնույն եղանակաժամանակային ձևով: Դրանք մասնավորապես արտահայտվում են.

Ա. Սահմանական եղանակով, հատկապես վերջինիս՝

1) Ներկա ժամանակով: Այս դեպքում միավորյալ նախադասության բաղադրիչները կապվում են մեծ մասամբ միավորական հարաբերությամբ: Ընդհանրական իմաստով ներկայի եզակի 2-րդ դեմքով գերադաս անդամների արտահայտությունն ավելի հաճախադեպ է, ինչպես՝ «Մի տեսակ ամեն ինչ ճիշտվում են, ամեն ինչի մասին մտածում...» (ՎՏԵ, 3, 372): Միավորյալ նախադասության գերադաս անդամներն երբեմն էլ արտահայտվում են ներկայի հոգնակի 2-րդ դեմքով. ինչպես՝ «Ամեն քայլում եմ տեսնում, ամեն քարի կտորի վրա եմ կարգում թշվառացնող, ավերող վայրենի ուժը» (ԼԱ, 106): Տարածված է միավորյալ կառույցի բայական գերադաս անդամների արտահայտությունը նույն ժամանակի նաև հոգնակի 3-րդ դեմքով. ինչպես՝ «Միշտ էլ սիրածին պատահաբար են պատահում կյանքում Ու ճրամեջտ են տալիս սիրածին անհրաժեշտաբար» (ՊՍԵ, 1, 318): Ավելի սակավադեպ այդ անդամներն արտահայտվում են ընդհանրական նշանակությամբ ներկա ժամանակի հոգնակի 1-ին դեմքով. ինչպես՝ «Ժնվում են քաղաք, ապրում են քաղաքացի, մեռնում են կարոտով» (ԱԽԾԺ, 3, 76):

2) Վաղակատար ժամանակի եզակի երկրորդ դեմքով, ինչպես՝ «Մեկ էլ գիշերը պառկելիս, ուղջ օրը եզի պես քանել, չարչարվելիս, վեր են ընկել, ոտներդ ձգել...» (ՊՊԾԺ, 2, 33):

3) Անցյալ կատարյալի եզակի 1-ին, 3-րդ և հոգնակի 1-ին դեմքերով: Այս դեպքում միավորյալ նախադասությունը, որպես կանոն, հիմնականում լինում է ներհակական հարաբերությամբ, և նրա բաղադրիչները կառուցվում են աստիճանական հակադրության սկզբունքով. ինչպես՝ «Գդալ-գդալ ժողովեցի, շերեփ-շերեփ ցրեցի» (ԱՂՀԱ, 50), «Ջրի գնացիք, ծառավ ետ եկանք» (ն. տ., 207):

Բ. Ավելի շատ հրամայական եղանակով: Այս եղանակը ամենատարածվածն է թե՛ պարզ և թե՛ բարդ միակազմ նախադասությունների մեջ: Դա է պատճառը, որ բայի 2-րդ դեմքը իշխում է միակազմ նախադասությունների մեջ: Այս դեպքում միավորյալ նախադասությունը մեծ մասամբ լինում է ներհակական հարաբերությամբ, և նրա բաղադրիչների հակադրության դուգահեռությունն ավելի է շեշտվում: Դերադաս անդամները եզակի հրամայականով արտահայտվելիս ԸԴՄՄ նախադասությունները ըստվորաբար արտահայտում են խորհուրդ՝ ընդհանրական նշանակությամբ, այսինքն՝ ուղղված են բոլորովին և ոչ միայն հատկապես երկ-

⁴ Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 396:

Ընդհանրական միավորյալ նախադասությունը կազմվում է նաև բայական բաղադրյալ ստորոգյալներով: Այս դեպքում բաղադրիչ նախադասությունները հիմնականում ունենում են ընդհանուր եղանակիչ՝ գործածված առաջին բաղադրիչում: Տվյալ դեպքում եղանակիչի գործածությունով ավելի հաճախ հանգես են գալիս պիտի, պետք է, հաբկավոր է, անհրաժեշտ է, մեծում է և այլ ձևեր, որոնք բաղմակի անորոշ դերբայների հետ կազմում են ԸԴՄՄ նախադասություն: Այս նախադասությունները նման են ընդհանուր եղանակիչ ունեցող բայական բաղադրյալ ստորոգյալներով կազմված երկկազմ միավորյալ նախադասությանը: Բերենք օրինակներ՝ «Հաբկավոր է հաբգել շահի խնդրանքը և դեսպանություն ուղարկել նրա հետ» (ՍԽՄՍ, 3, 19): «Ժամանակն է բարախել այս աշխարհի բեռն ու զնալ շեննաթի վայելքների գիրկը» (ն. տ., 31): «Այնուհետև պետք է բերկար ու բարակ բազար անել, երգվել, ազատախոսել, զովարանել վաճառքը» (ԲԾԺ, 2, 399):

Հաճախ էլ ԸԴՄՄ նախադասության բաղադրիչներից մեկն ունենում է պետք է-անհրաժեշտ դերբայ կաղապարով գերադաս անգամ, իսկ մյուսը լինում է անգեմ, բայց երկու բաղադրիչների իմաստներն էլ մասնավորվում են նույն հարցի շուրջը և վերաբերում են միևնույն ընդհանուրին. ինչպես՝ «Ի՞նչ պետք է անել այժմ նախարարների ապստամբությանը վերջ տալու համար. սահմաններից կանչել իր զինական ուժերը. թե...» (ՍՋՀԲ, 405):

2. Անորոշ դիմավոր միակազմ միավորյալ (այսուհետև՝ ԱԴՄՄ) նախադասության գերադաս անգամների դիմային վերաբերությունը անորոշ է, որով և պայմանավորվում են այդ նախադասության կառուցվածքային ու իմաստային առանձնահատկությունները: Այս դեպքում ենթակայի բացակայությունը պայմանավորված է լինում տարբեր հանգամանքներով: ԱԴՄՄ նախադասություն է կազմվում.

ա) Երբ կարևորությունը տրվում է գործողություններին, և գործող առարկան կամ առարկաները մզվում են ետին պլան. ինչպես՝ «էն օրը եկան թովջի արին, հարկ են ուղում տերություն» (ՀԹՀԵ, 15): Այստեղ նույնիսկ հասկանալի է, թե ովքեր են «թովջի արեւ», «տերություն հարկ ուզեւ»՝ գյուղական հարստահարիչները, բայց քանի որ գործող անձանց կարևորություն չի տրվում, ուստի նախադասությունը կառուցվել է միակազմ ձևով:

բ) Երբ գործող անձը կամ անձինք անհայտ են խոսողին (գրողին): Հաճախ հայտնի չի լինում նաև գործողությունները կատարողների թիվը: Երբեմն նույնիսկ գործող անձը մեկը լինելու դեպքում էլ բայական դերադաս անգամներն արտահայտվում են հոգնակի թվով, «որը անորոշություն արտահայտելու համար լավագույն քերականական միջոց է»⁶: Այսպես, օրինակ, Ա. Շիրվանզադեի «Նամուս» վիպակում Սեյրանը խորհրդածում է. «Մուսանին նրա ձեռքից խլում են և տալիս են Քոչարանց Ռուստամին» (Շիրվ., 4, 75), իսկ այդ գործողությունները կատարողը մեկն է՝ Բարխուդարը:

գ) Երբ խոսողը (գրողը) ներկայացնում է ուրիշից լսածը, ցանկանալով՝ 1) հայտնի չղարձեն ենթական և 2) կամ էլ եղակի կարծիքը ընդհանրացնել. ինչպես՝ «Ձեր մասին բամբասում են, վատ են արտահայտվում»:

Ինչպես տեսնում ենք, ԱԴՄՄ նախադասության բայական դերադաս անգամները հիմնականում արտահայտվում են հոգնակի 3-րդ դեմքով, որ անորոշության դրսևորման ամենաընդունված միջոցն է: Ավելին, երբեմն խոսողը (գրողը) նույնիսկ իր կատարած գործողությունները ներկայացնում է այդ դեմքով: Այսպես, օրինակ, խոսողը կարող է «Քեզ դիտողություն են անում և ուղում են դարձի բերել» նախադասությունն ասել այն դեպքում, երբ դիտողություն կատարողն ու դարձի բերել ցանկացողը հենց ինքն է:

Անորոշ դիմավոր միակազմ միավորյալ նախադասությունը լինում է հիմնականում միավորական, սակավադեպ էլ ներհակական հարաբերությամբ և հատկանշվում է նաև բայական դերադաս անգամների եղանակածամանակային արտահայտությամբ: Այդ անգամներն արտահայտվում են.

ա) Սահմանական եղանակի ներկա ժամանակի հոգնակի երրորդ դեմքով՝ «Իրանցն աւսում են ու քեզ շեն լսում» (ՀԹՀԵ, 161): Շատ հաճախադեպ է նաև պատմական ներկայի գործա-

6 Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Քաղիկյան, Նշվ. աշխ., էջ 478:

7 Հմմտ. Կ. Գյուլբերգադյան, Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967, էջ 77:

ծուքյունն այս իմաստով. ինչպես՝ «Մի օր նրանց հասցնում են սուլթանի քաղաքը, կանգնեցնում սուլթանի առջև» (ՍԽԱ, 90)։

բ) Սակավադեպ սահմանական ներկայի եղակի երկրորդ դեմքով՝ «Միտք ես անում, միտք, մեր էս աշխարհի բանը, հախում ես, տրափվում...» (ԴԴ)Ց։

գ) Սահմանական եղանակի վաղակատար ժամանակաձևի հոգնակի երրորդ դեմքով՝ «Նրան կանչել են շրջկոմ և Նշանակել նախագահ»։

դ) Սահմանական եղանակի անցյալ կատարյալի հոգնակի երրորդ դեմքով՝ «Ինձ ետ փաշեցին, մի կողմը տաբան» (ՀԹԸԵ, 204)։

ե) Հարկադրական եղանակի ապառնի ժամանակի հոգնակի երրորդ դեմքով՝ «Պիտի ուզեն հարսնացու, առնեն շոր ու մատանիք, օլիտի փռխեն ծածկը տան, պարտքը մաքեն, հարկը տան ու կաշառեն ջրպետին» (ՊՍԵ, 4, 66)։

զ) Ըղձական ապառնի հոգնակի երրորդ դեմքով՝ «Թող ինձ կարգացնեն, որդուս ուռում տան, մեզ ճափա ջնանց տան, ճամփից, հավատից շեռնեն» (ԽԱՎՀ, 35)։

է) Ըղձական ապառնի եզակի երրորդ դեմքով՝ «Հեռունա աչքից, օտաբանա սրտից» (ԱՂՀԱ, 238)։

ԱՂՄՄ նախադասությունը երբեմն էլ բաղադրվում է միևնույն եղանակի տարբեր ժամանակաձևերով արտահայտված բայական գերադաս անդամներով. ինչպես՝ «Նրան այդ թաղամասում շատ էին հաբալում և դեռ հիջում են»։ Նմանապես զուգակցում են նաև տարբեր եղանակաժամանակային արտահայտություններ գերադաս անդամներն ու անվանական գերադաս անդամը. ինչպես՝ «—Ձիսար ես, կեռաճալ մի՛... Սակայն ինչպե՞ս շկեռաճալ» (ՊՍԵ, 4, 190)։

Միակազմ միավորյալ նախադասության մյուս տեսակը՝ անգնմ միակազմ միավորյալ (այսուհետև՝ ԱՄՄ) նախադասությունն ունի կառուցվածքային, իմաստային ու ոճական այլ յուրահատկություններ. Հարկ է նշել, որ մեր կողմից միավորյալ դիտված ստորև քննվող կառույցները ցարդ չեն գնահատվել որպես այդպիսին (միավորյալ)։ Մենք դրանք միավորյալ ենք համարում լեզվական փաստերի հիման վրա։ Այսպես՝ հմմտ. 1. «Զգլխատե՛լ» 2. «Զգլխատե՛լ, այլ շղթաված ներկայացնել ատյան» (ՆԶԱԿ, 68)։ Այս նախադասություններից առաջինը պարզ է, իսկ երկրորդը՝ միավորյալ հետևյալ պատճառներով. նախ՝ առաջին նախադասությունն արտահայտում է մեկ գործողություն և ունի հնչերանգային մեկ ստորոգում։ Մինչդեռ երկրորդը նշում է երկու գործողություն, ունի հնչերանգային երկու ստորոգում և, հետևաբար, բարդ նախադասություն է։ Երկրորդ՝ դա միավորյալ նախադասություն է, որովհետև գործողությունների կատարումը սպասվում է՝ միևնույն անձի կամ անձանց կողմից։ Հետևաբար անդամ միավորյալ նախադասության մեջ մեծ է տրամաբանական, արտալեզվական գործոնի դերը։ Նման նախադասության ըմբռնման հարցում կարևոր է նրա բաղադրիչների միավորումը, որի հիմքը հատկանիշները միևնույն անձին կամ միևնույն քննադատի մարդկանց վերաբերելն է, որն էլ տվյալ դեպքում դառնում է տրամաբանական ստորոգումը։ Օրինակ՝ «Բարեկամվել քաղաքային ուղևորության տրանսպորտի աշխատանքը և պլանից ավելի փոխադրել 1,2 մլն ուղևոր» (ՍՀ, 4. 2. 1979,4)։ Այս նախադասության բաղադրիչների միավորման հիմքը քաղաքային տրանսպորտի բարելավման ու պլանից ավելի 1,2 մլն ուղևոր փոխադրելու պարտականությունները միևնույն քաղաքային տրանսպորտի սպասարկմանը վերաբերելն է և դրանք, որպես միասնական պահանջ, այդ քննադատի աշխատողների առջև դրվելու։

ԱՄՄ նախադասության մեջ բառային-ձևաբանական ստորոգման բացառումն որոշակիորեն դժվարեցնում է նրա, որպես մտքի միավորի, ըմբռնումն ու ճանաչումը։ Այս դեպքում էլ բառային-ձևաբանական ստորոգմանը փոխարինելու են զալիս հնչերանգային ստորոգումն ու խոսքը։

Անհայտ է, որ տարբեր ենթականերով բարդ համադասական կամ ստորադասական կապակցության բաղադրիչ հանդիսացող ԱՄՄ նախադասության գործողությունների դիմային վերաբերությունը հասկացվում է ոչ միավորյալ բաղադրիչից կամ բաղադրիչներից. ինչպես՝ «Այսօր նա ինձ բոլորովին այլ կերպ թվաց, քան երեկ էր. երիտասարդի նման ամեն ինչում արագաշարժ և վճռակա» (ԷԶԳՀ, 9)։

⁸ Օրինակը քաղել ենք Ս. Արարհամյանի «Ժամանակակից հայերենի քերականություն» գրքից (էջ 327)։

Հրամայական երանգի ԱՄՄ նախադասության մեջ գործողությունների վերաբերությունն ավելի ակնթախ է: Այդ նախադասությունն իր իմաստով մոտենում է երկկազմին: Ավելին. տվյալ դեպքում սպասելին միտքը երկկազմ կառույցով զրահորեն է, բայց խոսողը (գրողը) նախընտրում է միակազմ ձևը գործողությունների կատարման ընդհանրական անհրաժեշտությունը շեշտելու համար, որովհետև բովանդակության ընդհանրականությունը միակազմ կառուցվածքին ավելի բնորոշ է: Օրինակ՝ «Վարդն անշարժացավ: Իսկ թագավորը ձայնն ավելի բարձրացրեց»:

— Քսուքյամբ, դավով սպանել տվեց Գնեկին՝ նրա կնոջը տիրանալու համար: Կայանե՛լ անմիջապես եղեռնագործին և ճառե՛լ զլուրի» (ՍՋՀՔ, 202):

Անդեմ միակազմ միավորյալ նախադասություններն ըստ գերադաս անդամների արտահայտության բաժանվում են երկու խմբի՝ քայակազմ և անվազակազմ:

1. Քայակազմ անդեմ միավորյալ (այսուհետև՝ ՔԱՄՄ) նախադասության գերադաս անդամներն արտահայտվում են անորոշ դերբայով: Այս նախադասությունը, որ հատկանշվում է գեղարվեստական, հրապարակախոսական ու պաշտոնական ոճերում ունեցած լայն գործածություն, հայերենի լեզվամտածողությանը հարազատ կաղապար է: Ուշագրավ է, որ Մ. Մառտոցի գրած հայերեն առաջին գրավոր նախադասությունը բայական անդեմ միավորյալ է. «Ճանաչել զիմաստություն և դիտատ. իմանալ զբանս հանճարով...»:

ՔԱՄՄ նախադասությամբ արտահայտված գործողությունների կատարումը սպասվում է ապառնի ժամանակում. ինչպես՝ «Ո՞ր ճանապարհով մտնել շուկա և ո՞ր ծայրից սկսել...» (ԱՔՆ, 1, 311):

Ըստ բովանդակության նկատմամբ ունեցած հարաբերության ՔԱՄՄ նախադասությունները լինում են հաստատական ու միտական: Երբեմն էլ միևնույն կառույցը համատեղում է հաստատումն ու միտումը: Օրինակ՝ «Ողջունել սիրով անց ու դարձողին, օրհնեղբել կյանքը, աշխարհին ժպտալ...» (ՎՏՆ, 1, 186):

«Ինչպես գարնան բույրը վառ-Անցնել կյանքից այս թերի Ու երբեք չդառնալ» (ԵԶԵ, 322):

ՔԱՄՄ նախադասություններն արտահայտում են ամենատարբեր իմաստներ՝ գործողությունների կատարման անհրաժեշտություն, առաջադրանք, ցանկություն, ձգտում, պահանջ, կոչ, կարգադրություն, խոսողի ներքին կասկածները, անվճռականությունը, խոհերն ու ապրումները, հարցադրումը, հոգեվիճակը և այլն: Օրինակներ՝ «Մոռանա՛լ, մոռանա՛լ, ամեն ինչ, Ամենքին մոռանա՛լ, լսիրել, լրիսորհել, լափոսոսալ, հեռանա՛լ...» (ՎՏՆ, 1, 86): «Դադարեցնե՛լ կոտորածը և գերիներին հավաքե՛լ քարայրների մեջ» (ՍՈՄՍ, 3, 394): «Դուրս գրել բայերը և որոշել դրանց քերականական կարգերը» և այլն:

ՔԱՄՄ նախադասությունը երբեմն էլ համատեղում է մի քանի իմաստներ: Օրինակ՝ «Մաշել, Հոգնեցնել, սպանել թշնամուն ողջ Հայոց աշխարհում» (ԴԻՎ, 2, 450): «Ինչպե՞ս վրդովել նրա հանգստությունը, ինչպե՞ս խանգարել նրա քունը» (ԲՍ, 243): Առաջին նախադասությունը արտահայտում է գործողությունների կատարման անհրաժեշտություն ու պահանջ, իսկ երկրորդը՝ ափսոսանք ու երկընտրանք:

Ժամանակակից հայերենում ՔԱՄՄ նախադասությունը հաճախ դառնում է ընդհանուր ձևով ասված որևէ գործողության կամ եղելության մանրամասնումն ու մեկնաբանումը, չորով խոսողը իր ըմբռնումով ճշտում, բացահայտում և միաժամանակ իր վերաբերմունքն է ցույց տալիս այդ ընդհանուր կերպով ասված գործողության հանդեպ: Նման կառուցվածքը տարբեր ենթակայաներով բարդ համադասական նախադասություն է, որի առաջին բաղադրիչը լինում է ընդհանուր գործողությունը ցույց տվող երկկազմ կամ միակազմ պարզ նախադասություն. ինչպես՝ «Մի փրկություն կա միայն, լուկ մի ճանապարհ. Սիրել-այլովի ճավիթյան, խոցվել անզաղառ...» (ՎՏՆ, 2, 32):

2. Անվազակազմ անդեմ միավորյալ (այսուհետև՝ ԱԱՄՄ) նախադասությունը, որի ըմբռնման հարցում խիստ կարևոր է ստորոգային հատկանիշների վերաբերության հաշվառումը, քիչ է հանդիպում, որովհետև նրա գործածությունը պահանջում է յուրատիպ համատեքստ ու խոսքաիրադրություն, հաղորդման հատուկ նպատակ և այլն: Այստեղ հնչեղանքային ստորոգմանը մեծապես զուգակցում է տրամաբանական ստորոգումը, որի ըմբռնման հարցում մեծ է լեզվաիրադրության դերը: Այս նախադասությունն իր բովանդակությամբ կապվում է ներկա ժամանակի հետ, քանի որ ցույց է տալիս առարկային մտային ստորոգմամբ վերագր-

վող հատկանիշների դրույթները խոսելու պահին. ինչպես՝ «Աչքից հեռու, սրտից հեռու» (ԱՂՀԱ, 238): «Շեն տան աղջիկ, թարմ հացի կարոտ» (ն. տ.):

ԱԱՄՄ նախադասությունները կարող են լրացումներ ունենալ կամ շունենալ, Ընդ որում, բայական ծաղում ունեցող բառերով արտահայտված գերադաս անդամները մեծ մասամբ ստանում են խնդիր ու պարագա լրացումներ. «Բախտից փախչող, թախտից փախչող» (ԱՂՀԱ, 297): «Ուրիշին քարոզող, իրեն լուրջող» (ն. տ.): Իսկ երբ գերադաս անդամները լինում են բուն անվանական բառեր և ստանում են խնդիրներ ու պարագաներ, մասամբ զգացվում է հանգուցի զեղչված լինելը. ինչպես՝ «Երեսանց հայելի, տակից ածելի» (ԱՂՀԱ, 29): «Տանը ասլան, դրսում կատու» (ն. տ., 58): Այս օրինակներում է հանգուցի զեղչված լինելն են «հուշում» ընդգծված սահմանափակման խնդիրների և տեղի պարագաների հակադրությունը (երեսանց-տակից, տանը-դրսում):

ԱԱՄՄ նախադասությունները իմաստային տեսակետից միատարր չեն: Դրանք արտահայտում են՝ ա) համապատասխան վիճակների, իբրև ստորոգային հատկանիշների, գոյությունը՝ «Վերավոր և հուսահատված», բ) ցանկություն, կոչ, մաղթանք՝ «Մեկիք Խորայելին հարգանք ու պատիվ» (ՍԱՀՀ, 175), գ) վտանգ և դժուշակություն՝ «Հարեցող և խառնակիչ» և այլն: Բազմաբաղադրիչ կառույցը հաճախ միենուն առարկան բնութագրում է տարբեր կողմերից. առարկայի էությունն արտահայտում է նրա տարբեր հատկանիշները, ինչպես նաև խոսողի ու առարկայի փոխհարաբերությունը բացահայտելու միջոցով՝ մոտենալով, այսպես կոչված, ճարտասանական անվանական նախադասությանը. ինչպես՝ «Երկիր Հայաստան, իմ հող, իմ կրակ, իմ տաք ապառաջ, իմ այրված արոս, Կարմիր պղնձի Շիկացած երակ, ծարաված իմ կավ, Շոգ իմ բարբարոս...» (ՎԴԱՄ, 168):

ԱԱՄՄ նախադասությունը լինում է նաև ժխտական: Այս դեպքում հիմնականում գործառնվում է կրկնակի ժխտումը՝ արտահայտվելով ո՛չ... ո՛չ կրկնադիր շաղկապով. ինչպես՝ «Նա զրկվել է ամեն ինչից: Այլև ո՛չ իշխանություն, ո՛չ փառք, ո՛չ հարգալից անուն»: Այս նախադասությունը համանիշ է «(նա) այլև ո՛չ իշխանություն ունի, ո՛չ փառք ունի, ո՛չ հարգալից անուն ունի» երկկազմ միավորյալ կառույցին:

Հաճախ էլ անվանական միավորյալ նախադասության բաղադրիչներից մեկը լինում է աստատական, իսկ մյուսը՝ ժխտական: Այսպիսի կառույցը կարելի է անվանել մասնակի ժխտումով ԱԱՄՄ նախադասությամբ. ինչպես՝ «...վիժակ և ոչ թե իշխան» (ՍԶՀԲ, 43):

Ժամանակակից հայերենում միակազմ միավորյալ նախադասությունն ունի ոճական մեծ նշանակություն: Այս հարցը մի այլ քննության նյութ է:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՂՀԱ—Ա. Ղա ն ա լ ա ն յ ա ն, Հայկական առածանի, Երևան, 1960:

ԱԲԵ—Ա. Բ ա կ ու ն ջ, Երկեր, հ. 1, Երևան, 1976:

ԱԻԵԺ—Ա. Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1975:

ԱՇՔ—Ա. Շ ի ր վ ա ն զ ա դ ե, Քառս, Երևան, 1976:

ԴԴՎ—Դ. Դ ե մ ի ր ճ յ ա ն, Վարդանանք, հ. 2, Երևան, 1968:

ԵԶԵ—Ե. Զ ա ր ե ն ջ, Երկեր, հ. 1, Երևան, 1962:

ԷԶԳՀ—Է. ք ե ր մ ա ն, Զրույցներ Գյոթեի հետ, Երևան, 1975:

ԸԱ—Ը ե ո, Անի, Երևան, 1963:

ԽԱՎՀ—Խ. Ա ր ո վ յ ա ն, Վերք Հայաստանի, Երևան, 1959:

ՀԹԸԵ—Հ. Թ ու մ ա ն յ ա ն, Ընտիր երկեր, Երևան, 1978:

ՀՍՔԵ—Հ. Ս ա հ յ ա ն, Քարափների երգը, Երևան, 1968:

ՀՔՄՏԶ—Հ. ք. Ք ո շ ա ր, Մեծ տան զավակները, հ. 1, Երևան, 1959:

ՆԴԵ—Ն ա ր-Դ ո ս, Երկեր, Երևան, 1977:

ՆԶԱԳ—Ն ա ի ր ի Զ ա ր յ ա ն, Արա Գեղեցիկ, Երևան, 1967:

Ն. տ—Ն ու յ ն տեղում:

ՇԵԺ—Ա. Շ ի ր վ ա ն զ ա դ ե, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1930:

ՊՊԵԺ—Պ. Պ ո ռ յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1953:

ՊՍԵ—Պ. Ս ե ա կ, Երկեր, հ. 1—4, Երևան, 1972—1973:

ՍԱՀՀ—Ս. Ա յ վ ա զ յ ա ն, Ճակատագիրն հայոց, Երևան, 1967:

- ՍՋՀԲ—Ս. Ջ. Երյան, Հայոց բերդը, Երկիր, հ. 6, Երևան, 1962:
 ՍԽԱ—Ս. Խանդավյան, Ավանդատուն, Երևան, 1976:
 ՍԽՄՍ—Ս. Խանդավյան, Մխիթար աղարարիկ, Երկիր, հ. 3, Երևան, 1968:
 ՍՀ—«Սովետական Հայաստան» (օրաթերթ):
 ՎԴԱՄ—Վ. Դավթյան, Անկեղ մորենի, Երևան, 1967:
 ՎՏԵ—Վ. Տերյան, Երկիր, հ. 1—3, Երևան, 1960—1963:
 ԲԵԺ—Բաթթի, Երկրի ժողովածու, հ. 2, Երևան, 1955:
 ԲԱ—Բաթթի, Սամվել, Երկրի ժողովածու, հ. 7, Երևան, 1956:

ОДНОСОСТАВНОЕ СЛИТНОЕ ПРЕДЛОЖЕНИЕ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

АНДРАНИК КАРАПЕТЯН

Р е з ю м е

Сложноподчиненное предложение с главными однородными членами, в котором разные признаки предикативности грамматически не выражены, но логически воспринимаемы, называется односоставным слитным предложением. Подобные предложения бывают личными и безличными. Личные односоставные слитные предложения делятся на две группы: а) обобщенно-личные предложения и б) неопределенно-личные предложения. Безличные слитные предложения бывают глагольные и именные. Эти разновидности слитного предложения характеризуются различными структурными, смысловыми и стилистическими особенностями.